

Փորկապութիւն.

Փորկապութեան համար խմում են նռան ջուր, զիճ են ուսում.

Օծի թոյն.

Ոչ պահողները կծած տեղը պինդ կապում են, թմրեցնում, լետու պատռում ածելիով վէրքը և միջի թոկնը ծծելով բերանից թափում, Դրանից խոտոկ կոօթն կոչուած բոլսը վրան են տալիս կամ մածում քսում, ժանրը հանւում է և 8 օրից խոտոկ հիւանդը առողջանում, Մաճնաթեանը ածում են կոնֆի մէջ և կծած անդամը դընում մէջը.

8. Տէր Յովհաննիսեան.

ՄԱՀ, ԹԱՎՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ.

Ժողովուրդը հաւատում է, թէ մարդու մահուան օրը նախավէս որոշուած և գրուած է ճակատին, որ ոչ մի միջոց չի կարող հեռացնել կամ մօտեցնել այն։ Այդ օրերի հաջիւը պահւում է երկնքում դարսուած կճուճներով, որոնց մէջ իւրաքանչիւր տարի մի կաթիլ ջուր է կաթում։ Երբ կճուճը լցում է, օրը լրացած է լինում և մարդը մեռնում է։ Միւնոյն ժամանակ ամէն մարդ մի աստղ ունի երկնքում, երբ օրը լրանում է, աստղը ընկնում է և մարդն էլ մեռնում։

Երբ մարդու վախճանը հասնում է, եթէ բարի է՝ բարի, իսկ եթէ չար՝ չար հրեշտակը գալիս է հոգին առնելու, Բարի մարդը շատ հանգստութեամբ, ասելով, ծիծաղելով յանձնում է հոգին հրեշտակին, ստանալով նրանից ծաղկի մի փունջ, իսկ չարը երկար տանջւում է չար հրեշտակի հարուածների տակ։ Վերջինս սուրը խրելով հիւանդի կողքը, ամուր սեղմում է բկից, այնպէս որ նա ոչ մի բան չի կարողանում ասել և իւր «սրտինը սրտումն է մնում»։ Մեռ-

նելու ըռպէին մեռնողը լսում է իւր ազգական ննջեցեալների ձայնը, որոնք կանչում են. «Ե՛կ, Ե՛կ, ալստեղ լաւ է»: Ինքն էլ պատաօխանում է. «Գալիս եմ, գալիս»:

Երբ մարդը հոգին աւանդում է, բոլոր տնեցիները սաստիկ լալիս են, իսկ վոքը ինչ աւելի սրտոտները դարձնում են մեռելի երեսը դէպի արևելք, շորերը հանում են, կզակին մի թաշկինակ կապում, ոտների բթամատները բամբակի թելով կապկապում, աչքերը ծածկում, ձեռքերը կրծքին խաչաձև ծալում, վերան մի շոր ձգում և մի հաց դնում սրտին:

Իսկոյն գալիս են ազգականները և ծանօթները, միիթարական խօսքերով հանգստացնում սգաւորներին. «Ասուած սրտներդ մխիթարի, դուք ողջ լինիք: Բոլորս էլ մեռնելու ենք, Աստուած ննջեցեալի հոգին լուսաւորի, համբերող եղէք» և այլն: Գալիս է և քահանան ու օրհնում ջուրըն ու պատանը: Տղամարդ ննջեցեալին լողացնում են գիւղերում՝ հարևանները, իսկ քաղաքում՝ ժամկոչները: Կին նընջեցեալներին՝ գիւղում հարևան կանալք, իսկ քաղաքում՝ աղքատ կանալք և կամ, եթէ հարուստ է եղել, կուսերը՝ աղօթքներ մըմնջալով: Լողացնելուց յետոյ ննջեցեալի ձեռքերին մի մի մոմ են դնում, որպէսզի միւս աշխարհում իւր բարեկամ ննջեցեալներին ճրագի լուսով տեսնի: Յետոյ պատանում են սպիտակ կտուտով, փաթաթում մի կապերտում և դնում նաժի մէջ և վերան ձգում գիւղարդը:

Տասն տարեկանից բարձր ննջեցեալների համար ուժ օր շարունակ մոմեր կամ կանթեղներ են վառում նրանց լողացրած տեղերում, որպէս զի նրանց հոգիների ճանապարհը՝ դէպի երկինք լուսաւոր լինի:

Երբեմն պատահում է, որ հարուստ ննջեցեալների համար դագաղ են սպատրաստել տալիս և հետևելով քաղաքի սովորութիւններին, ծերինը անում են սե, հաստկաւորինը՝ կապուտ, իսկ երիտասարդինը՝ կարմիր, գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած:

Նոյն օրը քահանան կատարում է տան կարդը և նըն-

ջեցեալը տանում է եկեղեցի: Ննջեցեալը վերցնելուց յետոյ անմիջապէս նոյն տեղը մի քար են գնում, որպէս զի ննջեցեալի լիշտատակը հաստատ մնալ ալդ տան մէջ:

Մինչև թաղման օրը թէ սգաւորները և թէ նրանց ազգականներն ու ծանօթները ժամերգութիւնների ժամանակ եկեղեցի են գնում, իսկ առաջին ժամերգութիւնից յենակ բոլորը գալիս են ննջեցեալի տուն, քահանալին հոգոց ասել տալիս, մխիթարում սգաւորներին և մի մի բաժակ օղի խմում, հեռանում:

Թէ գիւղերում և թէ նոյն իսկ քաղաքում կտն լալկան կանալք, որոնք հրաւիրում են ննջեցեալի վրալ լատկապէս կանալք, Սովորաբար ամալր ողբոց հանդիսանում է նընլաց լինելու: Սովորաբար ամալր ողբոց հանդիսանում է ննջեցեալի մալը և կամ մեծ քոյրը: Սա նստում է ննջեցեալի սնարի, իսկ մի ուրիշը ոտների մօտ, միւս կանալք շըրջապատում են ննջեցեալը: «Ողբոց մալրը» թւում է ննջեցեալի առաքինութիւնները երգի եղանակով, միւսները կրկնում են վերջին խօսքերը և բարձրածալին լալիս:

Երբ ննջեցեալը եկեղեցումն է դրուած լինում, միւսնոյն երեսութը այնտեղ էլ է կրկնուում, և շատ անգամ աւելի սաստկութեամբ, որովհետև աւելի մեծ բազմութիւն է ներկայ լինում: Սակալն սրանով էլ չի վերջանում, և միշտ շարունակում է տանը: Այստեղ առաջ են բերում ննջեցեալի շորերը և մէկ մէկ բարձրացնելով, հոտոտելով, համբուրելով գովում և լաց են լինում: Գիւղի ամենահեռաւոր կէտից էլ լսելի է լինում ննջեցեալի տան ողբն ու կոծը:

Եթէ ննջեցեալը հարուստ է եղել, նրա համար պատարագ են մատուցանում և յետոյ թաղում, իսկ եթէ աղքատ, շուտով տանում թաղում են:

Թաղման ծէսը կատարելիս, կանալք դարձեալ շըրջապատում են ննջեցեալին եկեղեցում և ողբեր ասելով լալիս: Եթէ ննջեցեալը նոր նշանազգրուած է եղել, սգաւորները կարմիր խնձորի վրալ սպիտակ գրամներ շարած, նշանի մատանին աև քօղով պատաճ՝ դնում են ննջեցեալի վրալ և լաց լինում: Հատ անգամ լալկան կանալք ննջեցեալի կողմից մնաս բարե-

Են ասում նշանածին, և պատուէրներ տալիս նրան։ Սովորաբար քահանան էլ նպաստում է ողբ ու կոծին գտնձ ասելով, չնայելով որ այդ արգելուած է։

Լալն ու կոծը գնալով սաստկանում են և շատ անգամ ննջեցեալի մալը և քոլը պատառոտում են իրենց երեսները, քանդում, քաշում մազերը, թակում գլուխները, ուշագնաց լինում։

Վերջապէս կանանց հեռացնում են և վերցնում դագաղը տանում գէպի գերեզմանատուն։ Կանալք լաց լինելով և բարձրաձայն ողբեր ասելով՝ վերադառնում են տօւն և շարունակում շորերի վրայ կոծելը։

Տղամարդիկ քահանալի և խաչ ու խաչվառի առաջնորդութեամբ տանում են ննջեցեալը գերեզմանատուն։ Դիակառքեր գիւղերում բոլորովին չկան, իսկ քաղաքում կայ մի շատ հասարակը։ Զորս կամ վեց հոգի բռնած նաժից կամ դագաղից, առաջ են գնում, շուտ շուտ փոփոխուելով։ Նոր ըռնողն ասում է. «Աստուած ողորմի։ Միւսը թողնելով դագաղը՝ պատասխանում է. «Աստուած ողորմի ծնողացդ։»

Այս յուղարկաւորութեան ժամանակ քահանան զգուշանում է յետ նայելուց, որովհետև եթէ յետ նայի, նոյն տընից մի ուրիշն էլ կը մեռնի։

Վերջապէս յուղարկաւորութիւնը հասնում է գերեզմանատուն։ Դերեզման փորողներից մինը առաջ է գալիս, դագաղից բռնում, տանում գերեզմանի աջ կողմը գնում։ Սովորաբար գերեզմանները փօրում են գիւղերում ննջեցեալի ագգականները և կամ հարեւանները, իսկ քաղաքում ժամհարները։ Գերեզմանների խորութիւնը լինում է 2—3 արշին, իսկ լայնութիւնը մի արշին։ Աւարտելուց յետով թին ու բահը խաչաձև գնում են գերեզմանի վրայ, որպէս զի սատանները չմտնեն ներս։

Եթէ գերեզմանը լաւ փօրուած է լինում և հողը կակուղ, ասում են, թէ ննջեցեալը արգար էր, իսկ եթէ գերեզմանը վատ է փօրուած և հողը քարքարոտ է լինում,

շնչում են, թէ ննջեցեալը մեղաւոր էր, Աստուած նրան հողի մէջ էլ մի հանգիստ տեղ չտուեց:

Նախ քան ննջեցեալը գերեզման իջեցնելը, մօտիկ աղ-
գականները գրկախառնում են նաժը, համբուրում ննջեցեա-
լին և լաց լինում: Յետոյ, ննջեցեալին հանում են նաժից
և իջեցնում գերեզման: Քահանան օրհնում է հողը մօտիկ
աղգականի ձեռքում և ձգել տալիս գերեզմանի մէջ: Անմի-
ջապէս բոլոր լուղարկաւորները մի մի բուռ հող են ձգում
ննջեցեալի վրայ՝ ասելով. «Աստուած ճանապարհդ բարի ա-
նի, բարև տար մեր հին ննջեցեալներին: Յետոյ արդէն գե-
րեզման հատողները ածում են հողը գերեզմանի մէջ և վե-
րան մի թումբ կազմում:

Թաղման ծխակատարութիւնը կատարելուց յետոյ քա-
հանան ննջեցեալի տնեցիների կողմից հրաւիրում է լուղար-
կաւորողներին ննջեցեալի տունը՝ ճաշելու: Այս ճաշը տեղա-
կան բարբառով կոչւում է «Ժըմահաց» կամ «պատրագ»:
Սովորաբար եփում են շիլաճաշ. շատ անգամ մորթում են
մի եղ և կամ մի քանի ոչխար, թխում են 10—15 փութ հաց,
գնում են մեծ քանակութեամբ օղի և գինի: Ոչ միայն ե-
կողներին, ալլ և բացակայ անձինքներին և հիւանդներին
կերակուրներ են ուղարկում, որպէս զի տեղի չտան ոչ մի
չարախօսութեան: Ահագին բազմութիւնը լռելեալն և մեծ
ախորժակով ճաշելուց յետոյ, լսում է քահանայի օրհնու-
թիւնը նոյն տան հին և նոր ննջեցեալների հոգու փրկու-
թեան մասին և ապա, մխիթարութիւն բարեմաղթելով տը-
նեցիներին, ցըւում:

Միւս օրը, լուսաբացին, ննջեցեալի հալը և կամ եղ-
բալը գնում է գերեզմանատուն, համբուրում ննջեցեալի
գերեզմանը, և երեք անգամ վայ կանչում, որպէս զի հո-
գին, որ մինչև ալդ կանչը սաւառնում է գերեզմանի շուր-
ջը, անգորը ութեամբ ուղևորուի դէպի երկինք:

Նոյն օրը, ժամը 10-ին, սգաւորները գնում են գերեզ-
մանատուն «իքնաւողաք» (ալդ) կատարելու: Այնտեղ են հա-
ւաքւում և ննջեցեալի աղգականներն ու ծանօթները, մա-

նաւանդ կանալք, բերելով իրենց հետ օղի, գինի և խմորեղէններ:

Քահանան օրհնում է գերեզմանը, իսկ սգաւորները լաց են լինում, ողբեր ասելով: Վերջապէս երբ այլ ևս արցունք չի մնում աչքերում, վեր են կենում, համբուրում գերեզմանը և խաչամբուր տալիս: Մի կին ջուր է ածում գերեզմանի վրայ, որից բոլոր սգաւորները խմում են, կրծքերին քըսում, երեսները լուանում, որպէս զի եթէ վախեցած են, վախն անցնի: Յետոյ գերեզմանի հողից վերցնում, սգաւորների արտերին» են քսում, որպէս զի «սրաերը հովանան» և այլ ևս երկար չսգան:

Այս ամենից յետոյ բոլորը, թէ տղամարդ և թէ կին, մի մի բաժակ օղի են խմում երկար բարեմաղթութիւններով, ուտում բերած խմորեղէնները և ապա թողնելով մնացորդները գերեզմանի մօտ, վերադառնում սգաւորի տունը ճաշելու: Ճաշից յետոյ կրկին մի քիչ լաց են լինում, ննջեցեալի մասին խօսում և ապա ցրում:

Հիւրերը հեռանալուց յետոյ տնեցինները ննջեցեալի շորերը մաքուր լուանում են, որպէս զի հոգին մաքուր և անարտ գնայ հասնի իւր տեղը:

Գիւղերում ութ օր շարունակ սգաւորները առաւօտ երեկոյ եկեղեցի են գնում, ժամասացութիւնից յետոյ քահանալին հոգոց ասել տալիս: Խոկ քաղաքում քառասուն օր շարունակ կանալք տնից դուրս չեն գալիս: Նատերը նոյն իսկ մի տարի սուգ են պահում և տնից դուրս են գալիս միայն գերեզմանատուն գնալու:

Թաղման վեցերորդ օրը ննջեցեալի ազգական ու հարևան կանալք նորից հաւաքւում են ննջեցեալի տունը և լուանում սգաւորների գլուխները, որ մինչև այդ ժամանակ անլուալ են մնում: Նոյն երեկոլին մօտ ազգականներից արգահանս է ուղարկւում սգուորներին: Սգահանը բաղկացած է լինում զանազան տեսակ խմորեղէններից, եփած հաւկց, օդուց, գինուց և մեծ սգաւորի համար մի «փալաթից»:

Եօթներորդ օրը, ալսինքն «եօթին» ազգականներն ու

հարևանները նորից հաւաքւում են ննջեցեալի տունը և սըգ-սւորների հետ միասին դնում գերեզմանատուն, քահանալին օրհնել տալիս գերեզմանը, երկար լաց լինում, ողբեր ասում, և յետոյ վերադառնում տուն, ճաշում: Նաշից յետոյ քահանան օրհնում է բոլոր հին և նոր ննջեցեալների հոգին և ստանում 40 կ.—մի ըստբլի վարձատրութիւն:

* * *

Առաջ բերենք մի քանի նախապաշարումներ.

Եթէ գիւղում ննջեցեալ լինի, ոչ ոք գլուխ չի լուանալ, ոչ էլ լուացք կանի, վախենալով թէ մի գուցէ, հրեշտակը, որ ննջեցեալի պատճառով գիւղումն է, «կուփէ» (խըֆէ):

Կնոջ գերեզմանը մի արշին աւելի խոր են փորում, որովհետև կինը խօսք ման ածող է, խռովարար և սատանի հետ բարեկամ:

Եթէ մի ննջեցեալից յետոյ տնեցիներից հիւանդանում են, կարծում են, թէ ննջեցեալը իսկապէս մեռած չէ և տնեցիներից եօթը հոգի տանելու է: Որոշելու համար, թէ ննջեցեալը իսկապէս մեռած է թէ ոչ, գերեզմանի վրայ գարի են ածում և ձին տանում մօտը, եթէ կերաւ, ալդ ապացոյց է, որ ննջեցեալը իսկապէս մեռած է: Իսկ եթէ չկերաւ՝ գանցան է, որ մեռած չէ: Այս գէպքում բաց են անում գերեզմանը, ննջեցեալի գլուխը ջախջախում, կամ մի մեխ խըփում գլխին, մէկն էլ սրտին: Մի քանիսն էլ մեռելի սըրտից մի կտոր կտրում և հիւանդին են տալիս, որ ջրով ընդունէ և առողջանալ:

Արեւ մայր մտնելուց յետոյ ննջեցեալ չեն թաղում, ապա թէ ոչ գիշակեր կենդանիները կը հանեն գերեզմանից և կուտեն: